«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը>>

Դաստիարակ՝ Լիանա Անտոնյան

Մանկապարտեզ՝ «Սևքարի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1 Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար.....4

1.1 Ի՞նչ է հայրենասիրությունը.....4

Գլուխ 2 Նախադպրոցականներին հայրենաճանաչողության ոգով դաստիարակելու կետերը և մեր հայրենիքի խորհրդանիշները.....7

2.1Նախադպրոցականներին հայրենաճանաչողության ոգով դաստիարակելու կետերը.....7

2.2 Մեր հայրենիքի խորհրդանիշները 9

Գլուխ 3. Պարապմունք.....13

Դիտարկում.....16

Եզրակացություն և առաջարկություն.....17

Օգտագործված գրականության ցանկ.....19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Հայրենաճանաչողության դաստիարակելը այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկն է: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացը անհրաժեշտ է սկսել նախադպրոցական հաստատություններում, որի հիման վրա էլ կձևավորվի նրանց հայրենաճանաչողությունը: Սերմանելով սեր հայրենիքի, քաղաքի, հայրենի բնության հանդեպ, ծանոթացնելով երկրի մշակույթին և պատմությունը՝ յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իրեն շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ: Հայերենաճանաչողությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է, որի արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտանիքում և մանկապարտեզում:

Թեմայի նպատակը: Թեմայի նպատակն է երեխաների մեջ զարգացնել ազգային արժեքներ, գիտակից և պատասխանատու անհատ, որպեսզի ապագայում ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը:

Թեմայի օգտակարությունը: Հայրենաճանաչողություն թեմայի շնորհիվ սերմանվում է սեր հայրենիքի քաղաքի, հայրենի բնության հանդեպ, ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխան ծանոթանում է իր երկրի մշակույթին և պատմությունը:

Համապատասխանությունը նոր չափորոշիչներին: Աշխատանքը համապատասխանում է ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալին և երեխաներին ներկայացվող որակական պահանջներին:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դիտարկումից, եզրակացությունից և առաջարկությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 19 էջի սահմաններում:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

1.1 Ի՞նչ է հայրենասիրությունը:

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ի՞նչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով:

Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումների ողջ բազմազանությունը կարելի է պայմանականորեն դասել ուղղությունների:

Առաջին ուղղության մեջ կարելի է ներառել այն տեսակետներն ու դատողությունները, որոնք հայրենասիրությունը սահմանում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացմունք: Այս ուղղությունը բնորոշվում է բնության, հայրենի տան, ծննդավայրի, մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Երկրորդ ուղղությունը հիմնվում է հայրենասիրության՝ որպես բարձրագույն, առավել կարևոր ու էական զգացմունքներից մեկի ըմբռնման վրա: Սակայն այստեղ, հուզական կողմի հետ մեկտեղ, ներառվում է նաև գործնական տեսանկյուն. հայրենասիրական զգացմունքի ուժը չի սահմանափակվում հայրենիքի հանդեպ սոսկ սիրո խորությամբ ու վեհությամբ, այլ մղում է ակտիվ գործողությունների՝ հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Երրորդ ուղղությունը հայրենասիրությունը դիտարկում է որպես հասարակական երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը նշանակալի չափով

պայմանավորվում են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություններով, իշխող ընտրախավի քաղաքականությամբ: Խորհրդային հասարակական համակարգի պայմաններում հայրենասիրությունը գաղափարախոսական կարևորագույն հիմքերից մեկն էր, հանդես էր գալիս աճող սերնդի դաստիարակության առանցքային ուղղությունների շարքում:

Չորրորդ ուղղությունը բնութագրվում է նրանով, որ հայրենասիրության օբյեկտ է դիտվում պետությունը: Այն անվանում են «պետական հայրենասիրություն»: Հայրենասիրության այդ տարատեսակի ի հայտ գալը պայմանավորված էր պատմական առանձնահատուկ պայմաններով: Այն առաջացավ՝ կապված պետության, վերջինիս ամրապնդման համար պետական իշխանության տարբեր ձևերի ստեղծման ջանքերի համախմբման անհրաժեշտության հետ:

Հինգերորդ ուղղությունը բացահայտում է հայրենասիրության էությունը հենց անձի հետ անբաժանելի կապի հետ միասին, որը նրա համար բարձրագույն արժեք է: Տվյալ ուղղությունը կոչվում է նաև անձնային հայրենասիրություն:

Վեցերորդ ուղղությունը որպես հայրենասիրության սուբյեկտ շատ հաճախ դիտարկում է անձին: Հայրենասիրությունն ըմբռնվում է որպես անձի հոգևոր զարգացման, ինքնարտահայտման կարևորագույն փուլ: Դա հայրենասիրության բարձր մակարդակ է, քանի որ անձի հոգևոր ինքնադրսևորումը ենթադրում է կարևորագույն կողմերի և որակների մի ամբողջության դրսևորում, որոնք բնութագրվում են իրենց ձևակերպվածության լիարժեքությամբ, ամբողջությամբ, կատարելությամբ: Անձի այդ որակները ենթադրում են կրոնական բովանդակություն, ինչը հնարավորություն է տալիս այդ ուղղությունն անվանել հոգևոր-կրոնական: Հոգևոր-կրոնական հայրենասիրությունն ունի ամենամեծ և ամենահարուստ ավանդույթը, խոր և հզոր արմատներ:

Հայրենասիրությունը, եթե նկատի ունենանք ծագումը, առաջանում և զարգանում է որպես զգացմունք, որն ավելի ու ավելի է սոցիալականացվում և վեր հառնում հոգևոր-բարոյական հարստացման միջոցով: Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը՝ բնույթով որպես խորապես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսակայունության բնութագրիչ:

Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրերասիրության վերածնունդը:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի[1]:

....Այն բարեփոխումները, որոնք կոչված են վերածնելու Հայաստանը, չեն կարող իրենց հիմքում ունենալ բացասական և հակասոցիալական գաղափարներ ու բարքեր:

[1] https://krtaditak.am/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%A7%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՈԳՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ԿԵՏԵՐԸ ԵՎ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ:

2.1 Նախադպրոցականներին հայրենասիրական ոգով դաստիրակելու կետերը:

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Սրա նպատակն է կրթել համոզված հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել և պաշտպանել հայրենիքը: Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է, որի հիման վրա կրթական աշխատանքի այս ուղղությամբ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջ համալիրը:

- Երեխայի սերը բարձրացնել իր ընտանիքի, տան, մանկապարտեզի, քաղաքի կամ գյուղի, փողոցի նկատմամբ:
- Երեխաների իմացություն իր արմատների մասին: Երեխաների ծանոթացում քաղաքի պատմությանը և ենթակառույցներին:
- Երեխաների ծանոթացում պետության խորհրդանիշներին դրոշ, զինանշան, օրհներգ:
- Այցելել մշակութային վայրեր՝ հուշարձաններ, թանգարաններ:

Մի շարք աշխատանքներ դեռևս կարելի է նշել: Այս խնդիրները լուծվում են երեխաների գործունեության բոլոր տեսակներում խմբասենյակում, խաղերում, առօրյա կյանքում: Դրանք երեխայի մեջ դաստիարակում են հայրենաճանաչողություն: Երեխայի հայրենաճանաչողության դաստիարակությունը մանկավարժական բարդ գործընթաց է: Այն հիմնված է հայրենասիրության՝ որպես անհատական որակի ձևավորման վրա: Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողություն և հայրենասիրական դաստիարակության դրսևորումներն ունեն իրենց առանձնահատկությունները: Միջին նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրությունը սերմանելու նպատակն է ձևավորել նրանց բարի գործեր և արարքներ կատարելու անհրաժեշտություն: Երեխաների հայրենաճանաչողություն ասելով հասկանում ենք մեծահասակի և երեխաների փոխգործակցությունը համատեղ գործունեության և հաղորդակցության մեջ, որն ուղղված է երեխայի մեջ մարդու համընդհանուր բարոյական որակների բացահայտմանն ու

ձևավորմանը: Դաստիարակի աշխարհայացքը, նրա անձնական օրինակը, դատողությունները, ակտիվ կյանքի դիրքը դաստիարակության ամենաարդյունավետ գործոններն են: Եթե ուզում ենք, որ մեր երեխաները սիրեն իրենց երկիրը, իրենց քաղաքը, պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից: Բայց չափահասի ոչ մի գիտելիք արդյունք չի տա, եթե նա ինքը չի սիրում իր երկիրը, իր քաղաքը, իր ժողովրդին: Երեխայի հայրենաճանաչողությունն ու հայրենիքի հանդեպ սիրո զգացումը սկսվում է ամենամոտ մարդկանց՝ հոր, մոր, տատիկի, պապիկի հանդեպ սիրուց: Եվ տունը, բակը, որտեղ նա մեկից ավելի քայլել է, տեսարանը բնակարանների և մանկապարտեզի պատուհաններից, որտեղ նա ուրախություն է ստանում իր հասակակիցների հետ շփվելուց, և իր հայրենի բնությունը՝ այս ամենը Հայրենիք է:

2.2 Մեր հայրենիքի խորհրդանիշները:

Պետական դրոշ: Պետական դրոշը որոշակի գույնի (գույների) ու չափի պաստառ է՝ ամրացված սրածայր ձողի վրա: Դրոշը գործածվել է դեռևս Հին աշխարհի երկրներում՝ առավելապես ռազմական նպատակներով՝ որպես զինվորների հավաքի ու համախմբվելու, հեռվից լավ տեսանելի նշան:

Դրոշի օգտագործման վերաբերյալ հայոց ամենավաղ տեղեկությունը կապված է Հայկ Նահապետի անվան հետ. գալով Բզնունյաց ծովի (Վանա լիճ) շրջանը՝ նա իր դրոշն է պարզել մի ժայռի վրա:

Արյունից ծորած երիզ մի կարմիր,
Երկնքից պոկված կտոր մի կապույտ,
Հասուն հասկերի շող նարնջագույն
Եվ դարերի հավատի դրոշ Եռագույն:

Անդրանիկ Ծառուկյան,
բանաստեղծ

«ՀՀ պետական դրոշի մասին» ՀՀ օրենքով (15. 06. 2006) Հայաստանի Հանրապետության դրոշը Հայաստանի առաջին հանրապետության (1918–20 թթ.) եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով՝ լայնության և երկարության 1:2 հարաբերությամբ:

Նկար 1. ՀՀ պետական դրոշ[2]

[2]https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A4%D6%80%D5%B8%D5%B7

Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը՝ հարատևման, Հայկական բարձրավանդակի, քրիստոնեական հավատի, Հայաստանի անկախության և ազատության համար, կապույտը՝ ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո, նարնջագույնը՝ հայ ժողովրդի արարչական տաղանդն ու աշխատասիրությունը[3]:

Պետական դրոշը ծածանվում է հանրապետության նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, Կառավարության, Սահմանադրական դատարանի, պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, դատախազությունների, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի, դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսությունների շենքերի և փոխադրամիջոցների վրա, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղերում:

Պետական դրոշը բարձրացվում է հանրապետությունում մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում փակման արարողությունների ժամանակ, բարձրացվում է նաև հայ մարզիկներին միջազգային մրցումներում մրցանակային պարգևներ հանձնելիս:

Պետական զինանշան: Պետական զինանշանը խորհրդանշում է երկրի հասարակական-քաղաքական կարգը: Զինանշանների սաղմերն ի հայտ են եկել նախնադարյան հասարակարգում, առկա են նաև Հին աշխարհի ժողովուրդների բազմաթիվ խորհրդանշային պատկերներում: Վաղ անցյալում ազնվականական կամ իշխանական տները, երբեմն նաև առանձին անձեր, պետության կազմի մեջ մտնող վարչատարածքային միավորներ նույնպես ունեցել են իրենց զինանշանները:

«ՀՀ պետական զինանշանի մասին» ՀՀ օրենքով (15. 06. 2006) Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի առաջին հանրապետության զինանշանն է: Հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի 4 թագավորությունների՝ Բագրատունիների (վերևից՝ ձախ), Արշակունիների (վերևից՝ աջ), Արտաշիսյանների (ներքևից՝ ձախ), Ռուբինյանների

[3] https://www.president.am/hy/state-symbols/

(ներքևից՝ աջ) զինանշանները[4]: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն:

Նկար 2. ՀՀ պետական զինանշան[5]

Պետական օրհներգ: Պետական օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով:

Մեր Հայրենիք, ազատ անկախ,
Որ ապրել է դարե դար
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:
Ահա եղբայր քեզ մի դրոշ,
Զոր իմ ձեռքով գործեցի
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:
Նայիր նրան երեք գույնով,
Նվիրական մեկ նշան

[4] https://www.president.am/hy/state-symbols/
[5] https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A6%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6

Թող փողփողի թշնամու դեմ

Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է

Մարդ մի անգամ պի՛տ մեռնի,

Բայց երանի՝ որ յուր ազգի

Ազատության կզոհվի[6]:

«ՀՀ պետական օրհներգի մասին» ՀՀ օրենքով (25.12.2006) Հայաստանի Հանրապետության օրհներգը Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն է՝ «Մեր հայրենիքը» (խոսքը՝ որոշ փոփոխություններով, Միքայել Նալբանդյանի, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի):

Պետական օրհներգը պարտադիր հնչում է պաշտոնական հանդիսությունների ժամանակ պետական դրոշը բարձրացնելիս, նորընտիր նախագահի երդման արարողության, Ազգային ժողովի նստաշրջանների, հանրապետությունում անցկացվող զորահանդեսների, միջազգային և համապետական մարզական մրցումների պաշտոնական բացման ու փակման, միջազգային մրցաշարերում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին պարգևների հանձնման հանդիսավոր արարողությունների ժամանակ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: Երբ հնչում է պետական օրհներգը, ներկաները ոտքի են կանգնում և դեմքով շրջվում դեպի պետական դրոշը, տղամարդիկ հանում են գլխարկները:

[6] https://iravaban.net/34285.html

ԳԼՈՒԽ 3. ՊԱՐԱՊՄՈՒՆՔ:

Պարապմունք 1.

Թեմա՝ <<Իմ հայրենիքը>>

Խնդիրները

- Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին, ՀՀ զինանշանին, դրոշին, ընդհանրացնել տարվա ընթացքում երեխաների ստացած տեղեկությունները մեր երկրի հայտնի վայրերի մասին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում:
- Զարգացնել երեխաների խոսքը
- Պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա երեխաներին սովորեցնել հյուսել կապակցված փոքրիկ պատմություններ՝ առաջարկվող թեմայի շուրջ, ամրապնդել հարցերին պատասխանելու նրանց ունակությունը, մասնակցել զրույցին:
- Շարունակել աշխատանքը ստեղծագործական բովանդակությունն առանց բացթողման պատմելու, արտահայտիչ խոսք կառուցելու կորողությունների ձևավորման շուրջ:
- Հարստացնել երեխաների բառապաշարը:

Անհրաժեշտ պարագաներ՝

ՀՀ քարտեզը, դրոշը, զինանշանը, օրհներգը, նկարներ Հայաստանի քաղաքների և գյուղերի մասին:

Պարապմունքի ընթացքը-

Բանաստեղծություն Հայրենիքի մասին, ունկնդրման և քննարկման համար:

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ.

- Ինչի՞ մասին է հեղինակը պատմում բանաստեղծության մեջ;
- Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար:
- Ինչպե՞ս են անվանում մեր հանրապետությունը:
- Եկենք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը:
- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք՝ որ գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում:

Ֆիզկուլտ դադար

Երեխաները կանգնում են շրջանաձև և կատարում են բանաստեղծության բովանդակությանը համապատասխան շարժումներ:

Զրույց ՀՀ խորհրդանիշների մասին:

Դասընթաց

Երեխաներ, յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ, իրեն բնորոշ նշան՝ դրոշը, զինանշանը և օրհներգը:

Եկեք երգենք կարմիր, կապույտ, ծիրանագույն երգը, մեր դրոշի մասին: Մեկնաբանենք դրոշի գույների նշանակությունը: Ցուցադրենք դրոշը, որը ավելի տեսանելի է դարձնում պարապմունքը:

Վերջում լսել «ՀՀ օրհներգը»:

Պարապմունք 2

Թեմա՝ <<Հայաստանն իմ տունն է>>

Վերջնաարդյունք

Ճանաչել ՀՀ քարտեզը, որպես ողջ հայության միասնական տուն

Նպատակները

- Հասկանան, որ բոլոր մարդիկ բնակվում են երկրագնդի վրա, իսկ բոլոր հայերի տունը դա Հայաստանն է, քարտեզի վրա ցույց տան այն:
- Կարողանան տարբերել ՀՀ քարտեզի տեսքը, ներկել ջրային և ցամաքային տարածքները ճիշտ գույներով:

Անհրաժեշտ պարագաներ

ՀՀ քարտեզ, թուղթ, որի վրա երեխաները կփորձեն ինքնուրույն ներկել ՀՀ ուրվագծային քարտեզը, մատիտներ, ռետին:

Խթանում

Ցույց տալ ՀՀ քարտեզը, տալ գաղափար գույների մասին, որ ջրային տարածքը ներկված է կապույտ գույնով, ցամաքը դարչնագույն և կանաչ: Երեխաներին ցույց տալ քարտեզի վրա այն կետը, որը մայրաքաղաքն է, այսինքն՝ Երևանը, որ դարչնագույն և կանաչ գույներով ներկված ցամաքի վրա գտնվում էբնակության վայրը մարդկության, իսկ կապույտ գույնով գրային տարածքը, այս դեպքում Սևանա Լիճը:

Իմաստի ընկալում

Կատարելզույգերով առաջադրանք, երեխաներից մեկը կպահիքարտեզը,իսկ մյուսը ցույց կտա ջրային և ցամաքայինտարածքները,մայրաքաղաքը:

Բոլորը թղթի վրա կնկարեն քարտեզը, կներկեն համապատասխան գույներով, ցամաքի վրա կնկարեն մարդուկներ, կարմիր գույնով կներկեն Երևանը:

Կշռադատում

Ի՞նչ նոր բան սովորեցինք այսօր:

Ի՞նչը ձեզ դուր եկավ ամենից շատ:

Դիտարկում

1. Դաստիարակի նպատակն էր՝ երեխաների մեջ զարգացնել ազգայինը, ծանոթացնել հայրենիքին: Հաշվի առնելով իր սաների տարիքային առանձնահատկությունները, թեմային վերաբերվում էր պատասխանատու: Ուզում էր, որ երեխաները ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը:
2. Երեխաները ուշադիր էին, անկաշկանդ, հետաքրքրված նյութով:
3. Ժամանակակից աշխարհը բազմաթիվ մարտահրավերներ է նետում մարդկությանը՝ մանավանդ Հայաստան աշխարհին: Աճող սերունդը պետք է պատրաստ լինի դիմակայելու իր հայրենիքի առջև ծառացած խնդիրներին: Մանկավարժի խնդիրն է՝ ծանոթացնել սանին իր գյուղի, տարածաշրջանի, հայրենի բնության, մշակույթի ու պատմության հետ՝ նրա տարիքին համապատասխան:

Այսօր,առավել քան երբևէ, երեխայի հետ աշխատող մանկավարժը պետք է պահի ու պահպանի ազգային արժեքների ընկալումը իր սաների մեջ:

Եզրակացություն և առաջարկություն:

Այսպիսով պարապմունքի ընթացքում կատարվեց ուսումնասիրություն, որի արդյունքում կիրառված մեթոդների միջոցով որոշակիորեն գիտելիքներ փոխանցվեց երեխաներին՝ հայրենաճանաչողության բոլոր զգայարանների միջոցով՝ հոգի, սիրտ, միտք, եռամիասնության մշտական կիրառմամբ:

Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ: Նախադպրոցականներին միջավայրին ծանոթացնելու գործընթացում ընտանիքը ներգրավելու անհրաժեշտությունը բացատրվում է հատուկ մանկավարժական կարողություններով, որոնք ունի ընտանիքը: Նրանց սոցիալական կողմնորոշումը բարենպաստ պայմաններ է ստեղծում ավելի բարձր բարոյական զգացմունքների դաստիարակության համար: Հայրենաճանաչողության դաստիարակության մեջ հաջողության կարելի է հասնել, եթե մեծերն իրենք իմանան և սիրեն իրենց երկրի, քաղաքի կամ գյուղի պատմությունը: Մենք պետք է կարողանանք ընտրել այն գիտելիքները, որոնք հասանելի են նախադպրոցական տարիքի երեխաներին, ինչը կարող է երեխաներին ոգևորել և հպարտանալ:

Այսպիսով, որպեսզի կարողանանք նախադպոցական տարիքի երեխաների մեջ սերմանենք սեր դեպի հայրենիք, բարձրացնենք նրանց մոտ հայրենասիրական ոգին, պետք է յուրաքանչյուր դաստիարակ հետևի ստորև թվարկված կետերին՝

- Բոլոր երեխաներին ընդգրկել ծրագրային նյութի ակտիվ և համակցված ուսուցման մեջ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողություններն անհատապես:
- Կարևորել ոչ միայն մատուցվող նյութի բովանդակությունը, այլև դրանց ճիշտ ներկայացման ձևերը:
- Բացատրությունները պետք է լինեն պարզ, հարցերը՝ հակիրճ, կոնկրետ, հասանելի յուրանքչյուր երեխայի ընկալմանը:
- Պարապմունքներին հաղորդել զվարճալի և գունավոր երանգներ:
- Բոլոր գործողությունները կատարել դաստիարակչական գործունեության կազմակերպման անհրաժեշտ բարի կամքի մթնոլորտում:

- Աշխատանքներն իրականացնել հետապնդելով կոնկրետ նպատակ, այն է՝ հասնել ՀՀ ԿԳՆ պետական չափորոշիչներով սահմանված կարողունակությունների զարգացմանը:
- Ապահովել խաղային տարածք՝ ուսումնական գործունեության կազմակերպման համար:

Այսպիսով՝ ես եկա այն եզրահանգման, որ երեխաները լիովին կձևավորվեն գիտակից և պատասխանատու անհատներ, ապագայում կճանաչեն ու կսիրեն իրենց հայրենիքը, քանի որ նրանց մեջ զարգանում են ազգային արժեքներ:

Պարապմունքն անցկացնելուց հետո ես եկա այն եզրահանգման, որ դաստիարակը կիրառելով զանազան մեթոդներ՝ բառային, դիտողական, գործնական, խաղային, գրաֆիկական, կարող է հասնել կրթադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպման և յուրացման:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արապովա-Պիսկարևա Ն., «Իմ տունը», Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը, Երևան, 2019:
2. Չիբուխչյան, Լ. Սարգսյան՝ Մայրենի լեզվի պարապմունք, մանկապարտեզի ավագ խումբ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2011:
3. https://iravaban.net/34285.html
4. https://krtaditak.am/%D5%AB%D5%B6%D5%B9%D5%A7%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/
5. https://www.president.am/hy/state-symbols/
6. https://www.president.am/hy/state-symbols/
7. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A6%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6
8. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A4%D6%80%D5%B8%D5%B7